

Վարկային գործի վերաբերյալ բացասական եզրակացության հիմքերը

- Դիմելու պահին հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության արդյունքների անհամապատասխանությունը սույն կարգի և այլ ներքին իրավական ակտերի չափանիշներին,
- Ներկայացված ծրագրի անբավարար շահութաբերությունը և բարձր ռիսկայնությունը,
- Վարկի օգտագործման նպատակների թերհիմնավորումը,
- Ներկայացված փաստաթղթերի անարժանահավատությունը,
- Վարկի ապահովության անբավարար իրացվելիությունը,
- ՀՀ ԿԲ վարկային ռեզիստի կողմից տրված բացասական վարկային պատմությունը,
- Հաճախորդի գործունեությունից շրջակա միջավայրի աղտոտումը կամ վնասումը,
- Այլ պատճառներ:

Ուշադրություն.

Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեզիստի և վարկային բյուրո (աքոա):

Ուշադրություն.

Վատ վարկային պատմություն ունենալը Ձեզ համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.

Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները: